



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ Տ. ԹՈՐԳՈՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

Նյութ-Յորք

Հայրական սիրով կողջունենք տիրախնամ թեմիդ հոգևորականաց տա-
րեկան համագումարը, մաղթելով, որ սուրբ Հոգվո շնորհներով գորացած
վարեք ձեր աշխատանքները, հառավել պայծառություն ձեր սուրբ եկեղեցի-
ներուն և հառավել շինություն Մեր հավատացյալ զավակներուն հոգևոր
կյանքին:

Մեր ապրումներուն մեջ տակավին թարմ են բարի հիշատակները անց-
յալ տարվան ձեր համագումարեն, երբ անձամբ ներկա եղանք և մոտեն ճան-
չեցանք թեմիդ ամեն մեկ հոգևոր սպասավորը: Ծանցանք և սիրեցինք բոլորը
անխտիր, վասն զի յուրաքանչյուրին մեջ տեսանք մեր սուրբ եկեղեցին և
մեր հարազատ ժողովուրդին ծառայելու նվիրված հոգի մը: Քաղցրությամբ
կնիշենք բոլոր այն պահերը, երբ ամենքդ Մեզ կշրջապատեիք խանդավառ
սրտերով, որդիական հավատարմությամբ: Ինչքան երջանիկ էինք, ինչքան
գորացած կզգայինք զՄեզ այդ օրերուն:

«Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց,
երթ ոչ Դուք ի Տէր՝ առաջի Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գա-
լլատեանն: Զի Դուք էք փառք մեր և խնդութիւն» (Ա. Թեա. Բ 19—20):

Եվ ահա, երբ այս տողերը կհանձնենք այս սպիտակ բարի թողթին, կմխիթարվինք մտածելով, թե դուք վերստին պիտի տեսնեք ձեր մեջ ներկայությունը ձեր Հայրապետին: Կխորհինք, թե ամեն բանն վեր, ամենուս քրիստոնեական սեպուռի պարտքն է՝ առողջ, անբաժան և անխտով պահպանել մեր սիրո միությունը, մեր սիրո եղբայրությունը, խոր գիտակցությամբ մեր հոգեվոր առաքելության, որ է ծառայել այն ժողովուրդին, որ Նախախնամության ձեռքով հանձնված է մեզի, մեր բոլորիս հովվության: Այդ ժողովուրդը հայ ժողովուրդն է, որ իր երկրավոր կյանքը կվարե Հայաստանյայց եկեղեցվո սուրբ հովանիին տակ, աստվածակառույց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի օրինության ներքև:

Այո, միայն սուրբ Էջմիածնով է հայ եկեղեցին՝ մեկ ու անբաժան: Սուրբ Էջմիածնով է պայմանավորված և երաշխավորված հայ եկեղեցվո պատմական վավերականությունը, անոր սուրբ մարմնո մեկությունը և միությունը: Ահա թե ինչու՝ Մենք անձանձրույթ պիտի շարունակենք աղոթել ու գործել, որ վերջ գտնեն բոլորիս ցավ պատճառող բաժանումները, որ հառաջ եկան սկյուռքահայ եկեղեցական կյանքին մեջ վերջին տասը տարիներուն:

Մեկ ու անբաժան Հայաստանյայց եկեղեցի՝ այս է մեր եկեղեցին, որուն ուխտած եք ծառայել մահ դուք: Ան կոչվի Հայաստանյայց, վասն զի Հայաստան, մեզի հոգևորականներու համար, ամեն բանն վեր սրբություններու աշխարհ մըն է, ուր Նոյ Նահապետ Արարատի ստորոտին իր առաջին զոհը մատուցեց ճշմարիտ Աստուծուն, ուր սուրբ առաքյալները՝ Թադեոս և Բարթողիմեոս, Փրկչի Ավետարանը քարոզեցին, ուր նահատակվեցան ս. Ոսկյանք և Սուքիասյանք ևս. Կույսերը՝ Հռիփսիմյանց և Գայանյանց, ուր սուրբ Գրիգոր Լուսավորիչ, բազմաշարժար վկան Քրիստոսի, իր պատմական տեսիլքով՝ Միածին Որդվույն լուսաշող էջքը տեսավ հԱյրարատյան դաշտ, ուր բարձրացուց սյունը հայոց քրիստոնեական հավատքի՝ Մայր տաճարը սուրբ Էջմիածնի, և ուր հիմնեց Աթոռը Ամենայն Հայոց Հայրապետության: Հայաստան աշխարհ այն երկիրն է, ուր մեր ազգը ավելի քան տասնևկես դարեր փառավորեց Քրիստոս իր հուր հավատքով, իր ստեղծարար հանճարով և իր արյան գնով:

Ահա Հայաստանյայց եկեղեցին, ահա մեր քրիստոնեական ժառանգությունը, ահա աղբյուրը մեր ոգեկանության:

Այս գիտակցությամբ, այս ոգիով դուք ևս կոչված եք ծառայելու Հայաստանյայց եկեղեցիին, հայ հավատացյալ ժողովուրդին՝ ուսուցանելով անոր խոսքը Աստուծո, բաշխելով անոր հոգվո մխիթարություն, անեցնելով, կերտելով անոր մեջ բարոյական նկարագիր և մշակելով հայ քրիստոնեական մշակույթի արժեքները:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ Բանն Աստուծոյ, հալեցեալք յեկս գնացից նոցա՝ նմանօրք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ. 7—8):

Մեր ապրած օրերը ժամանակաշրջան մըն են, երբ բոլոր եկեղեցիները իմացական նոր արթնությամբ, հոգվո նոր ջերմությամբ ու համբերատար սիրով իրենց սրտերը կբանան արդի աշխարհին, արդի մարդկության, անոր հոգևոր-բարոյական-ընկերային կարիքներուն, անոր արդար իղձերու, երազանքներու կենսագործման:

Հայ ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, մեկ փոքր մասնիկն է արդի մարդկության: Եվ այդ մասնիկն է, որ կկազմե մեր հոտը, մեր խնամքին հանձնված ժողովուրդը: Մեր ժողովուրդն ալ, արդի պայմաններու մեջ, ունի իր կրոնական, բարոյական, ընկերային ու մշակութային կարիքներ:

րը, պահանջները, ունի իր սպասումները և արդար իդձերը իբրև եկեղեցի և իբրև ազգություն:

Մեր հայրական հորդորն է, որ ուղիղ հասկնաք ձեր սուաքելությունը և հատակ տեսնեք ձեր ճանապարհը իբրև ուխտապահ հովիվներ Հայաստան-յայց եկեղեցվո ու նվիրվիք ամերիկահայ Մեր հավատացյալ զավակներուն հոգևոր դաստիարակության և մխիթարության գործին, ամուր և անշարժ կանգնած հայ եկեղեցվո կրոնական ավանդներուն, հայ եկեղեցվո հերոսական պատմության և հայ քրիստոնեական ազգային մշակույթի հիմունքներուն վրա: Առանց այդ հիմունքներու կենդանի պահպանման, կոժգունի Հայաստանյայց եկեղեցվո գոյության իմաստը, առանց այդ հիմունքներու ձեր սուաքելությունը կկորսնցնե իր ամենաբնորոշ սուարկան:

Մերտորեն հաղորդակցության մեջ ըլլալով աշխարհին հետ, ժամանակին հետ և եղբայրորեն գործակցելով քույր եկեղեցիներու հետ՝ հասարակաց հարցերու լուծման և իդձերու իրագործման ի խնդիր, դուք շարունակեցեք ձեր սուաքելությունը ձեզի հանձնված հավատացյալ ժողովուրդի ծոցին մեջ:

Հետևաբար, արթուն մնացեք և հսկեցեք, մի՛ տկարանաք, մի՛ շփոթվիք, մի՛ տարակուսիք: Հավատքով ու սիրով կատարված ամեն աշխատանք միշտ արդյունավետ կըլլա անպայման: Սիրով միաբանած ձեր հոգևոր սրբազան սուաքնորդի շուրջ, հառաջ ընթացեք ուղիղ գծով, ձեր ետև ունենալով անխորտակելի բերդը՝ տաանակեց դարերու հայոց քրիստոնեական փառավոր ժառանգության և նույնքան քրիստոնեական հայոց հերոսական պատմության:

Արդ, սիրելիներ և հարազատներ Մեր, «ո՛չ դադարիմ ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս, զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբն իրով» (Եբր. Ա. 16—18), ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին
18 փետրվար 1969 թ.

